

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼՆԱՐԱՍ

Տարեկան 12 Ժր.

Վեցամսեայ 6 Ժր.

ԱՐՏԱՍՈՂԱՆՈՒՄ

Երկու քիւրակի ծախում

Տարեկան 14 Ժր.

Վեցամսեայ 7 Ժր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոլար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՏԻԿ

Մանուցման տոշը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ

ՀԱՍՑԻ

Rédaction du journal

«Ira vounk»

«KNA (du ganie

«ИЦИЯ

«и ВѢСТНИКЪ

«Ир вунк»

ВАРНА

Գրութիւնք եւ չեմ
տրոշիր

ՄԱՍՈՒԼԻ ՆՈՐՈԹԻՒՆՆԵՐ

Եզրկատուը սուսնի նման նորա-
նոր թերթեր բուսցնելու և ա-
սուպի նման անհետացնելու մէջ
տակաւին անմրցելի կը մնայ
ոնէ հայ գաղութի հետ Անգիւլ
տարուան սկզբները տասնեակ մը
նոր թերթերու նմուշներու երե-
ւան գալ ու կարճ ժամանակի
մէջ մեծագոյն մասին անհետա-
նալը և միևնոյն ատեն քանի մը
տարի կայծկտող Արշալոյսին ալ
միասին մշտնջող բաւական հետա-
քրքրական կը թուէր մեզ Բայց
այս անգամ Փարաւոններու նոյն
երկիրը մեզ ուրիշ քոչնդ գրա-
կան նորութիւններ կուտայ վա-
ղամեռի կարմիր յեղափոխական
կրակ թերթին կը յաջորդէ հա-
կայեգափոխական Պիճակ թերթ
մը: Կրակը իր կարմիր գոյնին
ու կղիչ պարունակութեան պատ-
ճառաւ, այնչափ ուժեղ փութերու
շունչին ենթակուեցաւ որ քանի
մը շաբթուան մէջ սպառեցաւ ու
մոխրացաւ: Հակայեղափոխական-
ները խանձել սպառնացող Կը-
րակէն անմիջապէս յետոյ յեղա-
փոխականները խալթելու սպառ-
նալիքով Պիճակի մը երեւան գա-
լը կողմնուելու երկու ծայրայե-
ղութիւններէ միջին ճամբայ մը
գտնելու յոյսով: Բայց այսօր
Կրակին չգոյութիւնը աւելորդ-
կ'ընծայէ Պիճակին գոյութիւնը:
Լաւ էր որ անոնց երկուքն ալ
կենային կամ երկուքն ալ չը
կենային, որովհետեւ ատենք ի-
րարու հետ պարտ էին գործ ու-
նենար որպէսզի երկու ծայրա-
յեղներու ընդհարումէն կարելի
ըլլար միջին ճամբայ մը գտնել:
ուստի քանի որ այլևս Կրակ չը-
կայ Պիճակին ալ գոյութիւնը
աւելորդ է ըստ մեզ:

Կովկասի Դաշնակցականները
և պահպանողական կառավարու-
թիւնը զարմանալի աչքկապուք
կը խաղան իրարու հետ: Դաշ-
նակցականներու հիմնած Յաւաջ
օրաթերթը իր խրոխտ վարմուն-

քով քիչ օրուան մէջ դադար-
ման դատապարտուեցաւ կառա-
վարութեան կողմէ: Բայց քանի
մը օրէն նոյն կառավարութեան
արտօնութեամբ Յաւաջին յաջոր-
դեց Ալիք նոյն ծրագրով և նոյն
վարիչներով: Կարճ ժամանակի
մէջ, միևնոյն արգելքին հանդի-
պեցաւ Ալիք և երկու օր յետոյ
լոյս տեսաւ Չանգ նոյն ծրագրով
և նոյն վարիչներով: Դիւ օրի
մէջ կառավարութիւնը զգաց թէ
հայ Դաշնակցականները իր հետ
աչքկապուք կը խաղան, և զայ-
դայրացած Չանգը ևս խափանեց,
տպարանը կնքեց ու արտօնադր
տիկինը հեռացուց Տիգրիսէն: Բայց
այսօր ալ երկիրի մը ձայնն է
որ կը լսուի այս նոր օրաթերթը
դաշնակցական վարիչներու դատը
կը պաշտպանէ ոչ-դաշնակցական-
ներու դէմ: Թէև մեզ տակաւին
անձանթ է իր բռնած դիրքը
հանդէպ կառավարութեան, սա-
կայն ապահով ենք թէ անզոյ
քայլ մը կրնայ զայն Յաւաջի,
Ալիքի և Չանգի դժբաղդութեա-
նը մատնել:

Այսօր ստացանք Պուլկարիոյ
Հայ Ուսուցչական Միութեան օր-
կանը եղող Ուսուցչական ամսաթեր-
թիկին առաջին թիւը: Երեւոյթը
ըստ ինքեան ուրախալի է, որով-
հետեւ այս օրկանը պուլկարահայ
գաղթականութեան կրթական
գործին մէջ դեր մը կատարել
կոչուած է: Մաղթենք որ իր դե-
րին հաւատարիմ մնայ, առանց
իր պատկանած Միութիւնը Յօս-
թօյնիստի մէջ ձգելու և առանց
անտեղի կռիւներ յարուցանելու
մեր կրթական գործին շուրջը,
որ միայն միացեալ ուժերով և
համերաշխութեամբ կրնայ չա-
րունակուիլ: Եթէ այս հակա-
պայմանը դրժուի—քաղաքական
ներկայ փափուկ հանգամանքնե-
րու մէջ—պէտք է զիտնալ թէ
բոլորովին կը վտանգուի պուլ-
կարահայոց կրթական գործը:

ԱՊԱՌԱՐՆԵՐՈՒ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

Տոհմաշխարհի ապառաժները դարաւոր
վրիժառու գնդակներու պէս առանձնութեան մէջ վեհապանծ
կողբայ երկիրը... աւերակներու դժխեմ քարակոյտ,
կողբայ անցեալի հառաչանքներն վայրագ
Հարստահարութեան շղթաներ թեւատարած
Աւերեցին հայութիւնն ո՛հ Աստուած...

Հայո. դժբաղդ արցունքներն Արաքսի
Երրաւի, Տիգրիսի մէջ վեհօրէն թափուեցան:
Տարաբաղդ ո՛հ երկիր՝ դարերու
Հսկայ բռնին տակ թաքուն:
Կորովի ժողովուրդ մը որ դեռ աննրկուն
Երգեց ահարկու լացի լիճ մը տխրագին...

Ո՛վ ապառաժներ Սիփանի՝
Բացէք դրօշը ծածկուած անցեալ պատմութեան,
Որուն էջերն զէնք, գնդակ, փամփուշտ, հրգեհ բորբոքուն
Թշնամիներու արբէն քամեց վերանորոգ փրկութեան...
Այսօր անպաշտպան կայրին կը մրկին քմահաճոյքներու տակ
Մասիս հակած է կարծես զինուորի մը վէրքերով ծածկուած...

Վրէ՛ժ, վրէ՛ժ... ուժ ունինք, ուժ ազատութեան,
Եւ գուք հայեր պէ՛տք է լռէք երբ հայաստանի թռչուններ՝
Անձկութեամբ ազատութեան ջահին կոպասեն:
Ո՛վ ապառաժներ քանի՛ գաղտնիքներ անցեալէն,
Որ ներկային մէջ արեան ծով մը՝ դժխեմ ամպերու խաղալիք
կը հեկեկան ամայութեան մէջ ալիք ալիք...

Բարբարոսներ անգութ ու սրտած սրեր՝
Կարծիր Սուլթանի, կարմիր քեօլքէն՝
Կարմիր շորերով զապթիաներ իրաւէի-անարդար...
Կորովին տակ ճնշուած յօշոտեցին
Անմեղներին կեանքը ո՛հ այնքան թանկագին:
Որք ազատութեան ջահին տակ ուղեցին ապաստանիլ անձկագին:

Նոյն ապառաժներն են որ գատ գատ, բորբոքուն ցաւերով՝
Դեռ այսօր վրէժխնդիր կուլան ազատութեան շուքին համակուած
Դեռ Արաքս արբէն լուայ է...
Դեռ ծիծեռները լալագին վրէ՛ժ, վրէ՛ժ...
Կը գոչեն մըշտատեւ օճախներու տակ՝
Դեռ մայրեր սգաւոր՝ կտուրներու տակ կ'ըսէ՝ արտասուածոր
Կտրիճներու հեռաւոր գերեզմաններու ստուերներէն կը դիւահարին
Դեռ վասպուրական փշատան է կապոյտին ներքեւ
Որ գերեզման սե՛ւ գերեզման կը բուրէ ահարկու
Օ՛ն ուրեմն տղի՛ք շարժինք, ապստամբինք, կարգն է գործելու...
Օ՛ն գործենք անընդհատ...
Թոժափել, բեկանել, օրէնքները արիւնոտ Սուլթանի
Ա՛հ ու սարսափ ազդել որ մեր վզին շղթան՝
Դարեմէ իվիւր անոր վատ սուրին տակ կը հեծեծայ...
Օ՛ն հայ քաջեր զէնքն է մեր ջահը ազատութեան
Առանց փամփուշտի ՀԱՅԱՍՏԱՆ
Աւերակներու կոյտ մը պիտի ըլլայ,
Գործենք միաբան ԱԶԱՏՈՒԹԵԱՆ սիրով վառուած...

ԱՏՈՎՄ

ՅՐԱՆ—ՄԱՍՈՆԵՐԸ
ԵՒ ՀԱՅԵՐԸ

Բարիքի նոր-հանդեսի խմբագրութիւնը կը հաղորդէ, թէ ֆրանսիացիներու ընդհանուր հաշիւը հայերու հետ համեմատելի որոշումը տուած է.

«Ընդհ. Պատգմ. Ժողովը՝ որ իր առաջին նիստին մէջ ռուս ժողովրդին ուղղեց իր համակրութեան զգացումները և յայտնութեան բարեմաղթութիւնները, պարտք կը համարի նմանապէս նշանակել կոտորածները՝ որոնք երկար ատենէ ի վեր կը տասանորդեն Հայաստանի դշբախտ ժողովուրդը, բաժան ինչպէս Հիւսիստանը, և որ ենթակայ է Ռուսաստանի և Թուրքիոյ մէջ ամենավատթար բռնութիւններու:

Հայերը 15 տարի է գաղանձեցու պէս կը հալածուին Օսմ. կառավարութեան կողմէ, որ կողմէ իսլամացիներ իր երկիրը, որովհետեւ, կըսեն մահմետականները իրենք, անոնք Արեւելքի մէջ թրքական տիրապետութեան խոչընդոտ են:

Հայերը, իսկապէս, իրենց ազատական և յառաջդիմական ձգտումներով Արեւելքի մէջ առաջադէմ պահակն են և բոլորական քաղաքակրթութեան:

Անոնք կը պահանջեն միմիայն Պերլինի դաշնագրութեան գործադրումը եւրոպայի երաշխաւորութեան տակ, կամ բարենորոգումներու այն ծրագիրը՝ զոր Տէրութիւններու ներկայացուցիչները Սուլթանին ներկայացուցին 1895 Մայիս 11ին:

Կը պահանջեն նաև որ ֆրանսական քաղաքացիութիւն ձեռք բերելու համար ունէ արգելք չի հանդիսանայ 1896 Յունիս 19ի իրատէին 5 յօդուածը որ կըսէ թէ քաղաքացի ըլլալու համար

պէտք է նախօրոք Դրան հաւանութիւնը առնել:

Թող անոնք ազատ ըլլան քաղաքացիական իրաւունքներ ստանալու, և ոչ մէկ դաշնագրութիւն, ոչ մէկ երկկողմանի տրամադրութիւն թող չի կապէ ֆրանսական կառավարութիւնը այս մասին:

Ընդհ. Պատգմ. Ժողովը, հետեւաբար իր համակրութիւնը կը յայտնէ հայ ժողովրդին և կը մաղթէ որ իր ամենաարդար բաղձանքները նկատի առնուին մեր կառավարութեանէն:

(Միաձայն ընդունուած, շաբաթ, 22 Սեպտեմբեր 1906):

ՔԻՉ ՄԸ ԼՐՁՈՒԹԻՒՆ

Բ.

Իրաւունքի 67 թիւին մէջ հրատարակուած «քիչ մը լրջութիւն» խորագրով իմ մէկ յօդուածիս «մասամբ գատողութիւն»[?] յօդուածով մը պատասխանելու է Ռուսաստանի Հնչ. մասնաճիւղերու Գործ. Յանցնախօսարար Գուգէն և Սուրէն ըստորագրութեամբ:

Կարծիքի տարբերութիւնները կը յարգենք, բայց չենք կրնար ըմբռնել թէ ինչպէս թոյլ կուտան մարդիկ իրենց փողոցային լեզու գործածել առանց զէմ որոնք կարծիքով միայն կը տարբերին իրենցմէ:

Գուգէն և Սուրէն «կակազում» բառով կ'որակեն իմ յօդուածը՝ որ բացորոշ է իր պարունակութեամբ և ոճով, ու չեն մտածել թէ ինչ անուն տալ պէտք է իրենց յօդուածին ուր այլանդակ սխալներու հետ բառերու անիմաստ կոյսեր ձեռք ձեռքի տուած քայլամուտի կ'ընթանան, որոնց ի լուր եփած հաւը անգամ կը խնդայ:

Չեմ գիտեր ինչ տրամաբանութեամբ «յեղափոխական գաղափարի թաքստեալ հակառակորդութիւն և ազգային ներքին թշնամութիւն» կը տեսնեն իմ յօդուածին մէջ, որ գրուած էր յեղափոխականը ու յեղափոխութիւնը իր բարոյական բարձրութենէն վար գլորելով շարաթանութեան վերածողները ձազկելու նպատակաւ միայն:

Սյո՝ հիմակ կըմտնեմ թէ մեր ձազկումը իրենց ալ զպած ըլլալու է. որովհետեւ անոնք ալ իրենց կարգին իրենցմէ աւելի խեղճերուն առջեւ նոյն դերին մէջ կը գտնուին եղբր:

Հանրային նշխարական զգացումներու մասին կը խօսին: Մենք ալ ճիշտ հայ ժողովուրդին նուիրական զգացումները շահագործող շարաթանութիւնն է որ կը ձազկէնք մեր «քիչ մը լրջութիւն» յօդուածով:

Կարծեմ սխալ չէի խօսած «ընկերվարական կարծիքներով» որոնք դեռ էն քաղաքակրթեալ ազգերու մէջ լուծուած չեն ստացած, ազգը կը պատակեցնէ: Բայց Մարդ քէօր ըլլալու է որ այդ ցաւալի պատկառումը չը տեսնէ նոյնիսկ հնչականութեան մէջ. որուն մէկ մասը այսօր ընկերվարութեան համար կուսակցութենէն բաժնուած և ազգային զգացումներէ իսպառ հրաժարած է. դաշնակցական կուսակցութեան մէջ ալ նոյնը սկսեց է (տես, «Նոր խօսք»):

Նաեւ ինչու «հետադարձ նպատակ»ի համար մեր մէջ պատկառում ստեղծել, երբ ազգին ներկան խորխորտ կը գահալիժի, որմէ փրկուելու համար միայն ջանքերու պէտք ունի ազգը: Պատկառումը ուժերու միութիւն կը ծնի եղբր: Ինչ հոյակապ դատողութիւն: «Հնչական յայդաւակ» չողջողուն բառին տակ պարզ լուր մը հաղորդել առնուածն ծիծաղելի բան մըն է, ինչ որ յեղափ. կուսակցութեան մը բռնախօսքը կը ստորնացնէ:

Ճանչալով Մուրատի յեղափոխական արժանիքը. կը ցաւիմ որ շահագործելու միտումով կարգմը մարդիկ զանի ծաղրելի կընեն, հայ պատմութեան մէջ Արշակունիներու, Արծրունիներու և Մամիկոնեաններու չը տրուած Մեծ տիտղոսը կցելով անոր անունին տիտղոս մը որ ընդհանուր ազգաց պատմութեան մէջ իսկ հազիւ քան ի մը եղական մարդոց տրուած է:

Ափսո՛ս որ մեր յեղափոխականներէ շատերը՝ «մասամբ իսկ գատողութենէ» զուրկ, պարտք մը կատարած կը համարեն իրենց սխալներուն վրայ յամռնելով և աչք ծակող փաստերու դէմ միայն հայոյանք տեղացնելով:

ԱՐԳՈՍ

— Եւ—Րապպի... պատճառը:

— Պատճառն ա՛յն էր կեանքի թրշնամի մըն է անոր միապետական գահին ու չ'ու գեր հպատակի:

— Ինչպէ՛ս կրլայ այդ... միթէ՛ւ այսքա՛ն տարինեք ի վեր հպատակ չ'էր ան, միթէ՛ւ այսքա՛ն տարինեք ի վեր հանդարտ ու խաղաղիկ չ'էր ապրեր. Ուրեմն ի՞նչ անցաւ... ի՞նչ բան տեղի տուաւ որ հպատակ ըլլալէ կը դադրի:

— Ինչ բան մի՞... ո՞հ, բարի ֆաբրի. կ'ավուրներու եթէ նայիս, կրեսն թէ՛ ճերմիւր մեր, է ու անք ե՛նք անոր հարազատ ժառանգորդները:

— Մտիկ ըլլէ՛ք պէ՛կ, ատիկա սրխալ չ'է... այս Երպիքը կեանքի թրշնամի էր... մեր սոյն թանկերը բռնութեամբ յափշտակած են անոնցմէ: Պատուութիւնը ցոյց կուտայ թէ հին ժամանակներու մէջ քուրտ ու կեանքի լին այս հողերուն վրայ տիրող տարբեր... անոնք, ունէին գահ, տուր ու թագ: Բայց ժամանակը հասաւ իր անողոք քայլերով. արածեց ձեռքերը, զաւկաւ հարուածեց ու վերջապէս տապալց առնել բան... Ու այսօր քուրտն ալ զրկուած կ'ապրի իր նախ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՇՈՒՄԼԱ 12 հոկտ. 1906

... Խմբագիր

Ինչպէս շատերին ծանօթ էր տեղւոյս «Լուսաբերեանց» տիկնանց ընկերութիւնն, որ բաւական տարինեք ի վեր հաստատուած ըլլալով, իւր օգուտներն ունեցած էր հայ իգական սեռին. բայց վերջի տարիներու մէջ անհասկողութենէ և կամ եսամոլութենէ յառաջ եկած խռովութիւններն պատճառ եղան «Լուսաբերեանց» ներս և անոնց յաջորդներն ալ յուսահատեցնել ստիպուեցան գործէ իսկ քաշուիլ, որով միմիայն անունը մնաց: Հետեւաբար Լուսաբերեանց վարժարանի նորոգութեան պէտքը զգալի լինելուն, սանուհիք փոխադրուեցան արական վարժարանը մինչ ի շինութիւն յիշեալ վարժարանի, դժբաղդաբար այդ ալ չնորոգուեցաւ, որով մինչեւ այսօր երկուսեւ կը յաճախուի:

Այսու հանդերձ զխաւոր կէտ մը կար ուղադրութեան անունելիք. այն էր Մանկապարտէզի համար խնամակալուհիներ... և ահա այդ պակասը լեցունելուն ուրախութեամբ կը փութամ աւետել Պատ. Թերթիգ միջոցաւ ազնիւ ընթերցողաց թէ՛ քաղաքիս Պատ. Թաղականութեան մեծարոյ անդամաց և Հոգաբարձութեան որոշմանց համաձայն արժանաւորներն ընտուեցան դարձեալ «Լուսաբերեանց» անուամբ և ամիջապէս փութացին բանալ Մանկապարտէզը: Հարկ անհրաժեշտ կըլլաւ զամ նոր ընտրուած տիկնանց անուններն իսկ զետեղել առդ որոնք իրենց մէջ Դիւան կազմած են հետեւեալ կերպիւ:

Տիկնայք. Տիրուհի Գ. Մանուկեան, — Ատենապետ, Մաննիկ Վ. Մարգարեան — Ատենապետ, Ֆիլիմոնէ Ս. Գուլումեան — Գանձապետ, իսկ Մարտուհի Ե. Խաչիկեան և Բէմպէ Պ. Էսափաշեան խորհրդատուք:

Մենք հրապարակաւ կը փութամք մեր գոհունակութիւնը յայտնել յիշեալ համեստ. տիկնանց, յորդորելով միանգամայն թէ՛ չըլլայ որ կարեւորութիւն տան կարգ մը նախանձոտներու «ըսի-բաւ»ներուն, այլ աւելի աշխատին փայլ մը տալու Մանկապարտէզին

նի փառքէն... միմիայն իր լեռներուն փարած ըլլալով հրացանը՝ ուսերէն ու ժանգոտած սուր մը՝ մէջքէն վար չ'է նետած... այս է տարբերութիւնը գերի կեանքի ու ապստամբ թուրքին միջեւ:

— Իրաւ է... իրաւ է... մըմնեց ձահվար պէկ զողջալով: Ես կարդացած եմ պատմութիւնը:

Աւագակապետը շաբաթ մը չափ հիւր մնաց ու համոզուեցաւ թէ բացարձակապէս տէր եղած էր ձահվար պէկի սրտին ու հոգիին. հետեւաբար խ'դրեց որ թոյլ տայ իրեն մեկնելու, խոստովանելով որ քիչ ատենէն պիտի վերադառնար:

— Կամքը՝ ձերն է, ըսաւ ձահվար պէկ: Աւիկից ետքը հիւր մը չ'է. ուղիւ ժամանակնիդ իկէք... ես կը միմիայն ամբողջ ձեզմէ:

Աւագակապետը խորին շնորհակալութեամբ ձեռքը տուաւ իր բարեկրօ մին, սեղմեց ու բաժնուեցաւ անկից:

(Շարունակելի)

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

23

ԱԽԱԶԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍՆ ԱՄԱՋԻՆ

ՃԱԶՎԱՐ-ՊԵՆ

(Շար. նախորդ թիւէն)

— Յուզուեցա՛ք, հարցուց ձահվար պէկ:

— Է՛հ, սիրտ է... եթէ ապառաժ ըլլայ. դարձեալ չը դիմանար, նկատել տուաւ Աւագակապետը: Գիտէ՛ք, ամենէ՛ն մեծ թշուառութիւնը ժողովուրդի մը գերութիւնն է... երբ անգամ մը լուծը դրուած է անոր վրայ, այնու ամեն ծանրութեան ներքեւ պիտի մտնէ. Կեանքը՝ գերի ժողովուրդ մըն է, անանկ չէ՛:

— Այո՛:

— Ան ատեն գթարի է անոր վիճակը, Դուք և ձեր ցեղակիցները պիտի

թողու՛ք որ գերի ժողովուրդ մը այսքան տառապի:

— Ա՛խ, ի՞նչ կրնանք ընել...:

— Շատ բան կրնաք ընել. բաւական է որ խեղճ ունենաք ու գթաք այն ժողովուրդին վրայ:

— Աստուած Թո՛ղ գիտնայ... ես ձեռքէս եկածը չ'եմ խնայել մինչեւ ցարդ և ասկից ետքն ալ չի պիտի խնայեմ:

— Բարի՛ է... մ մեջեց Աւագակապետը: Հիմակ ես վալի փաշային պիտի երթամ...

— Վալի փաշային պիտի երթաք:

— Ի հա՛րկէ:

— Ի՞նչ ընելու:

— Պիտի խօսիմ երկրին կացութեան վրայ... պիտի խօսիմ այդ գերի ժողովրդեան քաջանքերու մասին:

Անոգու՛տ է. փաշան ականջ չը կախեր ատանկ առաջարկութեանց, որովհետեւ բարձրագոյն հրամանի մը ծառայելու պարտաւոր է:

— Ուսկի՛ց կուգայ այդ բարձրագոյն հրամանը:

— Սուրբանէն:

— Մեր Խալիֆէ՛ն. ըսել կուգէք:

— Այո՛:

նաեւ ջանան կարգ մը սին պատճառ-
ներով հօտէն հեռացեալ ոչխարները
բերել խառնել եւ ընել մի հօտ եւ մի
հովիւ. մտաբերել միշտ անմահն երեւ-
ելի Հիւսիսի այն խօսքը թէ՛ «կիները
եթէ փափաքին շատ մեծ հրաշքներ
կարող են գործել...»

Սուր

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Էջմիածնէ հոկտ. 4ին կը գրեն
«Էջմիածնի գանձարանի ան-
միւթար վիճակը և ընթացիկ
փախքերի մեծ պահանջը թե-
լադրեցին պաշտօնական դիմում
անելու, որպէսզի արագացվի Էջ-
միածնապատկան գումարների
վերադարձումը»

Այս երկտողէն կը հասկցուի
թէ Էջմիածնայ գրառները դեռ
չէ վերադարձուցած կառավարու-
թիւնը:

— Շուշիի երկու հայ եկեղե-
ցիներէն ռուբեր ու զէնքեր
գտնուելու լուրը կովկասի թեր-
թերն ալ գրեցին, բայց մանրա-
մասնութիւններ դեռ կը պակ-
սին մեղ:

Հոկտ. 2ի իրիկունը անյայտ
չարագործներ սպաննած են փո-
ղոցին մէջ Հախումեանը և իր
կիներ:

— Գանձակի մէջ ալ քանի մը
հայ տուներ խուզարկութիւններ
կատարել սկսելով, 13 հայացան,
ատրճանակ և փամփուշտներ գը-
տեր են:

— Յովնանեան օրիորդաց վար-
ժարանի տեսչութեան խնդիրը
ահագին նիւթ կը մատակարարէ
Տիգրիսի հայ մամուլին: Լեւոն
սարգսեան ծանօթ հրապարա-
կագիրը տեսչութենէ ձգելու և
ղեկը իրենց ձեռքը առնելու
համար Գաշնակցականները ա-
մեն զբաղում թողած ժամանակէ
մը ի վեր կը մաքառին այդ քիչ
կարեւոր գործով: Յաւախն այն է
որ ծերունի Հայրապետն ալ իրենց
կամայականութեան գործիքը ը-
նել և ուղածնուն պէս վճիռ ար-
ձակել տալ կը յաղորդին: Այս գոր-
ծի մասին բողոքը ընդհանուր է.
կաթողիկոսը ևս այս տեսակի
գձուձ խնդիրներու մէջ խառ-
նելով, կը ցաւինք որ զանի ալ
ժողովրդականութենէ պիտի զըր-
կեն: Վեհ. Սարգսեանի տեսչու-
թիւնը վաւերացուցած էր իր
կոնդակով. այժմ զանի պաշտօ-
նանկ հուշակելու կը թելադրեն
կաթողիկոսը առանց պատճառի
եթէ չի սթափի Հայրիկը, խըն-
դիրը մինչեւ դատարան պիտի
հասնի:

— Հին-Նախիջևան գաւառի
կարօտ հայերուն նպաստ բաժնե-
լու պաշտօն ունեցող Տ. Լեւոն
վարդապետ հետեւեալը կը գրէ.
«Այս մօտաւորապէս 2 տարուայ
ընթացքում ողորմութեամբ և

ճրիարար ապրելով ժողովուրդը՝
բոլորովին փչացել է, նրանք սո-
վորել են ուղել և ուղել: Դի գիւ-
ղում հարուստը ևս աղքատի հա-
ւասար ուղում է ստանալ: չը ոտա-
նալու դէպքում նա աղքատի ստա-
ցածն էլ քթից է հանում: Կան
գիւղեր, որոնք ասում են, եթէ
տալ՝ բոլորիս տալ: միայն կարօտ-
եալների տալու դէպքում սպառ-
նում են գիւղում ւարիւն ձգել: Եւ
այսպիսի օրինակներ բոլոր թո-
ւանված հայ գիւղերում էլ կա-
րելի է գտնել: Ահա այս հանգա-
մանքները պատճառ են, որ օգ-
նութեան գործը արգելքների է
հանդիպում և երբեմն էլ անը-
պատակ բան դառնում: Հայ ժո-
ղովուրդը օգնութիւն-նուէրի վը-
րա նայում է իրրեւ հարստանա-
լու մի միջոցի վրա»

— Տ. Նահապետ եպիսկ. Նահա-
պետեանի մահը սրտի պայթու-
մէ առաջ եկեր է նոր Նախիջե-
ւանի մէջ, ուր օգափոխութեան
գացածէ եղեր հանգուցեալը:

— Հայոց գէմ պոլթոսը աւրած
ըլլալուն պատճառաւ Մաշատ Ալի
անուն թուրքը սպաննուեցաւ
մզկիթի բակին մէջ ճանպէզար-
ներու պարագլուխին արձակած
գնդակներովը:

— Դերբէնդի կայարանէն աւա-
ղակները Մատթթ անունով հայ
երիտասարդ մը գերի տարին և
3000 ռուպ. փրկանք կը պահան-
ջեն:

Վերջապէս գողութիւն, աւա-
ղակութիւն և սպանութիւններ
դեռ անպակաս են կովկասի մէջ:
Թուրքերէ շատերը չեն կարող
տակաւին իրենց չար բնազդը
զսպել:

ՍԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Էջմիածնի նախկին դպրապետ
Տ. Կոմիտաս վրդպ. կաթողիկոսին
հրամանով Եւրոպա անցած ըլլա-
լով, կը պատրաստուի Բարիդի
մէջ նուագահանդէս մը տալու
հայ եկեղեցական և ժողովրդա-
կան երգերու: «Բարիդու Հայկա-
կան Միութեան» անդամները ե-
ռանդով կաշակցին այդ նուա-
գահանդէսին, որուն հասոյթը
պիտի յատկացուի նոյն Միութե-
ան:

— Տրապիզոնէն ստացուած
նամակի մը մեզ զրկուած պատ-
ճէնէն կը տեղեկանանք, թէ այդ
քաղաքի նաւամատուցի հայակեր
գօմիսէրը պաշտօնանկ եղած է
չնորհիւ Էմբուլլահ անունով բա-
րի թիւրք պանդոկապետի մը:
Տեղեկատուն կաւելցնէ թէ պաշ-
տօնանկ գօմիսէրին հետ հայ
ճամբորդները կեղծքող Մարեցի
Մարգար Պաղտիկեան և Քլեցի
Մկրտիչ և Տագէս ծաղիկեան հայ
պանդոկապետներէն պէտք է

զգուշանալ: Էմբուլլահ թիւրք
պանդոկապետը դիւրութիւններ
կընծայէ ճամբորդներուն, որոնց
կը յանձնարարուի այդ թիւրքին
պանդոկը երթալ փոխանակ
մտնիչ և կեղծքիչ միւս հայ
պանդոկապետներուն երթալու:
— Օտեսայէ Լօնտօնի թերթե-
րուն հեռագրած են, թէ Եօթը
հայ կիներ Կովկասի Զինն գիւ-
ղակը 48 ժամ պաշտպանած են
քսան հոգիէ բաղկացեալ զինեալ
թաթարներու դէմ: Գիւղին ե-
րկմարդիկը ուրիշ հայ գիւղե-
րու օգնութեան գացած են ե-
ղեր: և երբ վերադարձեր են,
յարձակող թաթարները ոչնչա-
ցուցեր են:

— Գահիրէի առաջնորդարանը
ազգապատկան հողերու վարձա-
կալ Ալի Լամուս պէյի դէմ դատ
բացած լինելով, Պէնի Սուէֆի
դատարանը յետ քննութեան
արդար գտած է առաջնորդարա-
նի պահանջները և դատապար-
տած է Լամուս պէյը 150,000
լըշ վճարելու:

— Գահիրէի հայ հարուստներէն
Տ. Պետրոս կարապետեան տեղե-
կանալով Վանի Երամեան վար-
ժարանի և առհասարակ Վասպու-
րականի տագնապալից վիճակին,
յանձն առեր է 40 ոսկի տալ
Վասպուրականի սովեալներուն և
600 ոսկի Երամեան վարժարանին,
վեց տարի 100-ական ոսկի վճա-
րելով:

— Հայ երիտասարդ մը թուր-
քերուն ձեռքէն պուլկար աղջիկ
մը ազատելով, միասին հոս հա-
սած են: (Տես, Թուրքերէն բաժ-
նին մէջ)

ՆՊԱՏ ՎՍՊՈՌՏԱԿԱՆԻ ՍՈՎԵԼՈՑ



«Հոկտ» 15ին կիրակի երեկոյ ժամը
8 1/2ին «Սաէտինէրի» Որահին մէջ
«Սոխակ» նուագախումբի Կողմէ
պիտի ներկայացուի «Արիւնքոտ հարսա-
նիք» կամ «Ասլան Զարու հի» մեծ պա-
տրաստութեամբ եւ բոլորովին նոր
զգեստ) երգի Նպաստ Վասպուրականի
Սովեալներուն:

Կր խնդրուի յարգոյ հայ հասարակու-
թենէն որ հաճի ներկայ ըլլալ ներկա-
յացման մասնաորակէս նպաստել Վա-
նի մեր դժբաղտացած հայրենակիցնե-
րուն:

Կարգադիր Մարտիրոս մը:

Յ. Կ. Ը նկիւրեան

Ա Սորոխանեան

Ա. Մէլիտոնեան

9 հոկտեմբեր 1906

Վանա

ՎԱՌՆԱՅԻ ՈՐԲԱՆԱՄԸ

Հայոց Որբախնամի Ը. րորդ Ընդհ.
ժողովը տեղի պիտի ունենայ յառաջի-
կայ կիրակէ 15 հոկտ կէս օրէն վերջ
ժամը ՃԻՇՏ երկուքին Ազգ. վարժա-
րանի սրահին մէջ:

Օրակարգ

ա. Գործ. ժողովոյ համարատուութիւն
բ. Ընկերութեան արդի վիճակի մա-
սին խորհրդակցութիւն

Լիայոյս ենք թէ Ընկերութեան ան-
դամներ ներկայս իբր հրաւիրագիր ըն-
դունելով պիտի բարեհաճին ներկայ
գտնուել: Ըստ տրամադրութեան կա-
նոնագրի ժողովին ներկայ գտնուող
անդամները մեծամասնութիւն պիտի
նկատուին եւ տրուած որոշումները
պիտի գումարարեն: Իսկ բացակայ ե-
ղող անդամներ վերջէն բողոքելու եւ
դիտողութիւն ընելու իրաւունք չ'պի-
տի ունենան:

Մնամք յարգանք

Ի դիմաց Գործ. ժողովոյ

Ատենադպիր

Ատենապետ

Ա. Զարգանեան Յ. Կ. Ծանկիւրեան

Կնիք

ՎԻՄԱՌՈՒՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Յիւլիոյ Թովմաս Տիւրքեան եւ
Մնակ Պետրոսեան— Զեր բաժնեգէները
չը վճարելով, ընկալագիրները ետ
դարձուցեր էք: Ինչ պատճառաւ: Զենք
կարծեր որ դուք ըլլաք այն աստիճան
գձուձներ, որ անխղճութիւնը ունենաք
հայ թերթ մը տարիէ մը աւելի չահա-
գործելու ձեր սրճարաններուն մէջ ա-
ռանց վճարումի: Զեր մարդավայել զգա-
ցում կրելը ապացուցէք պարտքերեք
զրկելով մեզ:

ՍԼԻՎԷՆ Յ. Պողոսեան— Մինչեւ
երբ սպասենք որ ձեր լրագրի պարտ-
քը վճարէք. այլեւս ինչով կարելի է
վստահիլ ձեր հանրային պաշտօնավա-
րութեան...:

ԾԱԽՈՒԻ ԳԻՐԳԵՐ

ԹԻՒՊՈՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր.

» Բ. » [433 էջ] 2 ֆր.

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿՈՆ երկրորդ անգամ սպազ-
րուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկար-
ներու նիստ ու կացը ու թուրքերէ
կրած տառապանքը անոնց ազատու-
թենէն առաջ. Գին 50 անգիւր

ՀԱՅԻՆԵՐԻ ՉՈՔՆԻ Պատկեր
մը Տաճկահայաստանի իրական կեան-
քէն: Զեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմել
ՎԱՌՆԱ «Ի Ր Ա Ո Ւ Ն Ք» ի խմբագ-
րութեան

«ԶԱՅՆ» ՀԱՅՐԵՆԵԱՑ

Այս մեծածաւալ շարաթաթերթի յե-
ղափոխական ջրուտ յոգուածներ,
քննադատականներ եւ ազգային ու
քաղաքական լուրեր կը պարունակէ:
Արտասահմանի համար տարեկան
բաժնիքին է 12 ֆր. կանխիկ.
Հասցեն է՝

Արմենեան Բիւլայիիկ քո.
Բ. Օ. Պօքս 1731, Պոսթրն, Մաւս.
[Ա. Երիկա]

Կարելի է բաժանորդագրուիլ նաեւ
Իրաւունքի խմբագրութեան միջոցաւ:

ՖԵՏԱՔԵԱՐԼԸԳ

Պունտան 6—7 սենեկ մուգատու
տեմ Շուալուտա պիր պուկար 8
հաշրնտա օլան գըզընր վարնատա
պիր խըսըմընա կեթիւրմէք ի-
չիւն՝ քէնտի խըզմէթիսի օլան
պիր թիւրքէ թէսլիմ իտէր:
Սատըգ զանն օլընան թիւրք
վառնազա կէլմէսինտէ գըզ իլէ
պերապէր տօղրու վաբօրա կիրուպ
Սթանպօլա կիտէր: Սէֆիլ գըզը
խրիսթիանարտան իրադ 6-7 սե-
նէ սագլար: Նիհայէթ չու եագըն
կիւնլէրտէ Պուրսա քէօյլէրինտէ
պիր էրմէնի կէնճ մէզպուրէ գըզ
իլէ կէօրիւչիպ, սէրկիւլէշթիւնի
անլամասընտա, անը թիւրքլէր-
տէն գուրթարուպ, վաթանընա
վէ վալիսէյնիւնէ գալուշտըրմագ
իչիւն հէր պիր ֆէտաքեարլըշա
հաղըր օլտըլընը պէյան իտէր:
Շիմտի 13—14 հաշրնտա պուլը-
նան մէզպուրէ գըզ էրմէնի կէն-
ճին վառընա, ալիճէնապլըզընա
էմնիյէթլէ, անըն րէյիւնէ թէս-
լիմ օլուր: Հէր իքիւի լազ էլպի-
սէսի կիլիւնուպ, պիր թարիգլէ
իզմիրէ վասըլ օլուրլար: Սրատա
կէնճ էրմէնի գըզը րուս գընսօ-
լուհանէյէ թէսլիմ իտուպ, քէն-
տիսի պիր օթէլէ կիտէր: Բօլիս-
լէր միւզի պիր չուխ զաննը իլէ
անը թէվգըֆ իտէրլէր: Իքի
կիւն սօնրա գօնսօլուս կէնճի հա-
պըստան գուրթարուպ գըզ իլէ
պէրապէր վարնայա կէլէճէք օ-
լան պուկար վաբօրըն գարիթա-
նընա թէսլիմ իտէր:
Իշթէ տիւն սագլահ գըզ վէ չօ-
նուգ պիրլիքտէ վաբօրտան չը-
գուպ հիւքիւմէթէ վուգուի հալի
պէյան իտէրլէր: Հիւքիւմէթ գը-
զա սահապէթ իթմէքտէ օլտըլը
կիպի, ալիճէնապ էրմէնի կէնճէ
տախի հէր հալտէ մանէն վէ մատ-
տէն միւքեաֆաթ իտէճէք զանն
իտէրլէր:
Գըզըն ասըլ իսմի վէլչէ տիր:
Թիւրքլէր անը Մագպուսէ թէս-
միյէ իտուպ, Պալըգ—Սէրայ նամ
քէօյիւն ճամիսինէ հէտիյէ իթ-
միլչէր: ճամիտէն հօտէնէն ալըգ-
լէ պիր թիւրք գատընըն զապթ
ու հիմայէսի ալթընտա պուլընը
ըմըլ:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹՈՒՐԿԻԱ

Մաքէթոնիա ժանտարմա սէր
գօմանտանը իթալիալը ժէնէրալ
Տը ճօրճիս բաշանըն խանէսինէ
կազ տէօքիւպ եագմագ թէչէ-
պիւսինտէ իքան, տուլուլըպ
պատըրըլմըլ: Պու ճիւնայէթ
Բուվարտան զանն օլընիյօր, զի-
րա Բուվար ճօրճիս բաշայը սէվ-
մէզլէր իմիլ:
Եւ թիւրքլէր սէվէրլէ՝ ր մի:
—Սթանպօլտան թէքըրաթէն

Գօրէսթօնտաւ եագիյօրլար քի՝
Բուվ բաթրիքիւնի պուկար գօ-
միթիւլէր էօլաիւրմէք իչիւն գա-
րար վէրիւտիկիւնի խապէրի
հէրնէ գատար Սօֆիատան թէք-
զիպ իտիւտի իսէտէ սահիհ տիր:
—Սասունը գըրտըգտան սօն-
րա՝ շիմտիտէ Մուշ օվասընր խա-
րապ իթմէք էֆրեարընտա պու-
լընան թիւրք հիւքիւմէթի՝ չու
սըրա Գէոք Զաֆուշը արամագ
պէհանէսի իլէ՝ իքի պէօլիւկ
ասքէր իքի ատէթ թօքլարլէ
Մուշ օվասընտաքի էրմէնի քէօյ-
լէրինէ եօլլայուպ, քէօյլիւլէրէ
գանլը կէօլ եաշլարը տէօքտիւր-
մէքտէ տիր: Ֆաքիւրլէր հէմ աս-
քէրլէրին եէմէքլէրինի մէճնա-
նէն վէրէճէքլէր վէ հեմոնէ ան-
լէրին վահիանէ քէյի վէ ար-
զուլարընա ալէթ օլաճագլար:

ՏՄԽԻԼԻԷ

Ֆէլսամ, Բրէնս հաղրէթլէրի
հէմչիքէսի վէ տիկէր բրէնսէսլէր
իլէ բէրչէնպէ կիւնիւ շէհրիմիլին
պէօիւկ ճատտեսիտէ կէզիւնուպ:
Մ. Բարսամեանըն վէ թօսպըլըգ-
եանըն տիւքեանլարընտան պա-
զը էչեալար վէ միճէֆէրաթ իշ-
թիրա էյլէմէքտէն մատա, Մ.
Թօսպըլըգեանըն տիւքեանընտա
պիր մըգտար օթուրտուլար:
—Սուլթանը զիրայէթ իչիւն
Բրէնս հաղրէթլէրինին Սթան-
պօլա կիտէճէկիւնէ տայիր օլան
չայէթաթ իթիմատ օլունմայօր:
—Տօպրիչ—Վարնա թէլէֆօն
խաթթը րէսմէն քիւշատ օլուն-
մուշտըր:
—Բուսնուգտա Վասիլ Խրիս-
թով վէվէսիւնի եարէլէմէք
գաթթի իլէ անըն գուճողընտա-
քի 3 հաշրնտա օլան եէյէնիւնի
պըշտգլէ էօլտիւրմիւչ: Գաթթի
տէրտէսթ օլունմուշտըր:
—Բօսթատան 340,000 ֆր, չա-
լան Զագըրնով վէ Բօսթանտինով
մէմուրլարըն աղընը վէ հագ-
լարընտա ճիւնայէթ տափասը ա-
շըլաճաղընը հիւքիւմէթին րէսմի
կազէթասընեագիյօր:
—Բուվարտան զապթ օլընան
խաթթախանէնին իտարէսի իչիւն
գաղաճըլըն մէճլիսի իտարէսի
10,000 ֆր, թախսիս իթտի:

ՐՈՒՍԻԱ

Կարստան կիտէն բօսթա արա-
պասընա հիւճուլէ հայտուտլար
29000 րուպի կէօթիւրմիւլչէր:
—Թամպօթտա 3 ժէնէրալ, 28
զապիթ վէ 260 նէֆէր իիւթիւ-
լա տախի օլմագ թէօհմէթի իլէ
հապ օլընմըլար:
—Տոււմ իչիւն մէպուս ինթի-
խապլարը զեկտեմբերտէ իճրա
օլընաճաղը մէմուլ օլունիյօր:
—Հիւքիւմէթին խարիճտէն
իւթէգրազ իտէճէկիւնէ տայիր օ-
լան չայէթաթ Բէթրապուրկտան
թէքզիպ օլընիյօր, իւթէսլէր
տախի վէրէն օլմայաճագ տըր:

Կ Ի Ր Ի Տ

Կիրիա գօմիսէրլիկիւնէ Մ. Զայ
միսին թայինինէ գարչը Պապր
Ալիւնին րօթէսթիւնէ էհէմիլիէթ
վէրէն օլմատը Մ. Զայիսա տա-
նըն ասրլարընը եաթըրշտըրմագ
իչիւն մուլթէլիֆ բարթիլէրի
պարըշտըրմագտա օլտըլը կիպի,
իտարէի զապիթէսի իչիւն տախի
Եուճանիստանտան եսնան զա-
պիթլէրի կէթիւրտէճէք իմիլ:
Պու զապիթլէրին կէլմէսինտէն
վէ պիր ազ սիքիւնէթ հիւքմ
իթմէսինտէն սօնրա, էվրոքա աս-
քէրլէրին Կիրիտտէ գալմալարը
զիտտէ կէօրիւլէճէք վէ սնլարա
Եօլ վէրիւլէճէք տիր: Ասքէրլէրին
զըգմտլարանտան պիր միւտաթթ
սօնրա տախի Կիրէտին Եուճա-
նիսթան իլէ պիրլէլէսի իլան
օլընաճագ, տէվլէթլէր իսէ Պա-
պր Ալիւնին րօթէսթիւնէ գարչը
եա թէքըրա սիւքիւն գալաճագ-
լար վէ եախօտ «Իշ օլմուշ պիթ-
միլ նէ՝ եաբալըմ» տէմէքլի օ-
մուզլարընը սիլքէճէքլէր:

ՄԻԻԹԵՆՎՎԻԷ

Ին մէշհուր Բուս էտիպլէրին-
տէն վէ իսթիլալ րահպէրլէրին-
տէն Մաքսիմ կէօրկի, Բուսիտան
գաշուպ պիր գաշ ալտան պէրու
Մ. Ամերիկայա կիթմիլ իտի:
Մէրգուլըն եանընտա Մատամ
Անտրիէվա նամ պիր գատըն
պուլընտըլը վէ պու գատըն քէն-
տի մաշուգէսի օլտըլը սէպէպլէ
նիւ Եօրքտա պիր թագըմ օթէլ-
ճիլէր թաասուպլէ անլէրի օթէլ-
լէրինէ գապուլ իթմէսիլէր իսէ-
տէ, պաշգա թարաֆլարտա չօք-
լարըն թէվէտնուհընա նայիլ օլ-
տուլար: Մատամ Անտրիէվա վէ-
րիլէն իանէլէրի գապուլ իթմէ-
յուպ, քէնտի իտարէսի իչիւն
պիր օթէլտէ խըզմէթիսի օլտու:
Շիմտի աշըգ վէ մաշուգէ պէ-
րապէր օլարագ Բիշըով իսմի ի-
լէ էվրոքայա կէլիյօրլար: Մա-
տամ Անտրիէվա Ամերիկատան չը-
գաճաղը էսնտտէ տէմիլ «Ամե-
րիկալըլարըն պանա ազ հիւսնի
գապուլիլէթ վէրտիլլէրինտէն
տուլայը անլարը ալըպլամամ: Օն-
լար պիլի անլայաճաղտը, զիրա
անլէրին հըսիյաթը եալընը
բարա մէսէլլէրի իչիւն միւլթէ-
սիւր օլուր:

—Մըրըտա պիր Տարիւլ-Պի-
նու (համալսարան) թէչէսիս իք-
մէք իչիւն չու սըրա մահէլին
արապ ճէրիտէլէրին պէօյսլի խա-
յիլ կէօթէրմէքտէ օլտըլարը
կիպի, սահիպի սէրվէթ օլան բա-
շալար վէ պէյլէր տախի պէօ-
յիւկ մէպլալար իհտա իթմէք
վալ էյլէյօրլար: Ալի պէկ Շէ-
րիֆ 10,000 լիրա վէրմիլ վէ
15,000 լիրա գըլմէթիւնտէ պիր
արազի տախի իհտա էյլէմիլ
տիր: Ալի բաշա Ֆէհմի 2000 լի-
րա իրաւ կէթիւրէն պիր վաղըֆ
թախսիս իթմէք վաւ էյլէմիլ:
Բէշա պաշգա զաթլար:

Ապօնէլէրիմիլէ պօրճըա-
րընը կէօնտէրմէլէրի րէճա
օլունուր: Գէօյլէրտէ օլանլար Տօպ-
րիչաէ Մ. Սիսակեանա վէ Սի-
լիստրէտէ Մ. Արթաքի Սարգիս-
եանա էօտէյէ պիլիլէր:

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ . 9 Սեպտեմբեր

ՋԱԽԻԼԷ

ՊՈՒՂՏԱՅ

Վախօն 100 քիւլ. 10-60/11-80
Արապա 52-58 լիպ. 7-10 40

ԱՐՔԱ

Վախօն 100 քիւլ. 10. 20/10. 40
Արապա 42-47 լիպ. 6/6-40
ԵՈՒԼԱՅ արապա 33/36 լիպ. 4. 20/5.

» 100 քիւլ. 11. 11. 25

ՋԱՎՏԱՐ արապա 52/57 լիպ. 7/7-20

ՅԱՍՈՒԼԵԱ արապա 100 քիւլ. 22/17

ՌԱԲԻՑԱ 100 քիւլ. — Եօք

Արապա 100 քիւլ. Եօք

ՏԱՐԸ արապա 6. 6/40

ԲՕԼՕՁ արապա 55-60 լիպ. 11. 12.

ՄԻՍԻՐ 57-58 լիպ. առապա 6. 40/7. 00

» 100 քիւլ. 9. 20/9. 50

Կիւնտէ վախօն 40/50 վէ 500—600

արապա կէլմէքտէ . վախօն մուամէ-

լէսի նաքօլէօն 20 ֆր. արապա մու-

ամէլէսի նաքօլէօն 20. 20

ՊԱԳԱԼԻՅԷ

Վարնա ընացասընտա պագգալիլէ
մալլէրին պու էլէնքի ֆիլպիլը, ալթուն
ֆրանք իլէ:

ԳԱՀՎԷ 2.05/ 2.25

ՇԷՔԷՐ Նէմցէ 86/87

ՇԷՔԷՐ քէսմէլ սանաղգ 42 50

ԲԻՐԻՆՃ ձէնօվա չուվալը 42.

» Ֆիլիպէ » 35/39

» Ինկիլիպ » 32

Բիզօն » 49.

ԿԱՁ Սանաղգը 10 40

ՁԷՑԹԻՆ եաղը քիւլ. 85—1. 5

ԳՈՒՐՈՒ Իւզիւմ 45

Եուճուրթա 100 ատէթի 7. 00

ԹԱՁԷ ՁԷՄԼՆ

Դայիսէրիտէն չըգան պատըրմա լէզէ-
թինտէ պատըրմա եարմագ իսթէյէն-
լէրէ իլան օլունուրքի՝ Պալթաճըր
շարընտա նօմէր 73 տէ Թ. վէ Գ
Թիմուրճեան պիրատէրլէր տիւքեանըն-
տա պու սէնէնին նաթիւրէլ Դայիսէրի
լէ մէնի վէ սուլմագ սաթըրմագտա տըր:
— Խարիճտէն սըրարիլլէր սէրիան իճ-
րա օլունուր:

ՄՇԱԿ

Օրաթիւթ քաղաքական, գրական

Բամնեգիւնը՝ Եւրոպայի համար 30 ֆր.
Ամերիկայի համար 6 տոլար, Պարսկաս-
տանի եւ Ռուսաստանի համար 10 րուպ-
լի տարեկան:

Հասցէ՝ Խրազդուքիւն «ՄՇԱԿ»-ի
(Գուլիսա) Թիֆլիս

Одговорникъ А. Курбетянъ
печатница А. Тодоровъ С-но —Варна